ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ. ՆԻՒ ԵՈՐՔ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1895. ԹԻՒ 17 ԱՄԲՈՂՋ ԹԻՒ 104

ՀԱՅԿ

ՀԱՆԴԷՍ

ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

HAIK

AN ARMENIAN JOURNAL

Edited by M. S. Gabriel, M. D. 202 West, 23d St., New York N. Y. Vol. V, 1895.

ՐՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ Հայ Հայրենասիրաց.— Տէրութիւնք և Սուլթանն.— Սասուն. 1893ի դէպքերը, Կառավարութեան միջամտութիւնն, 1894ի կոտորածն.— Հայաստանի վիճակն.— Նամակ Կ. Պոլսէ.— Նամակ Պաթումէ.— Լրագրաց կարծիքն Հայկական Խնդրոյ մասին. Լ. Թայմզի կարծիքն, Ինչ կ'ասէ Տէյլի Նիւզ, Ինչ կ'ասէ Նովոսթի ռուս լրագիրը, Ինչ կ'ասէ Զօսիշէ Ցայթունկ գերմանական լրագիրը, Շիքակոյի Թայմզ-Հէրալտ կ'ասէ.— Կամախի դէպքերն— Այլևայլք.

Կ. ՊՈԼՍՈՅ

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱՍԷՐՆԵՐՈՒՆ

Ներկայ թուոյ առաջնորդողով ներելի պարզութեամբ նշանակած եմք այն երկու պատահականութիւններն որոց մին կամ միւսն պիտի կրնայ վերջ տալ ներկայ հայկական ճգնաժամուն։ Ռուսիա կրնայ ցամաքով Հայաստան իջնել և գրաւել. Անգլիա կրնայ ծովով իջնել ի Կ. Պոլիս։ Զի երեւիր թէ այս երկու կարելի կերպերէն դուրս ոչ է հնարիւք պիտի կրնան խնդրոյն միջամուխք վերջ տալ տագնապին։

Ռուսական գրաւումն ի հարկէ պիտի տեղի ունենայ գաւառական զարհուրելի կոտորածոց հետեւանօք, իսկ անգլիական մուտն ի Կ. Պոլիս պիտի հարկաւորի եթէ մայրաքաղաքն ժխորի կարեւոր շարժմամբ ժողովրդին։

Հայոց ձեռքն է եւրոպական միջամտութեան կերպին ու ժամուն վերայ ազդել։

Կ. Պոլսոյ մէջ շարժում մի աւելի բաղձալի է, որովհետև չի կրնար անոպառ խժդժութեանց առիթ լինիլ, ինչպէս կը լինին գաւառական շարժմունք։

Գեանէն հեռու գտնուողներուս համար դժուար է ասել թէ հասա՞ծ է մեծ շարժման մի ժամն Կ. Պոլսոյ համար. վրճռել չեմք կարող, այլ կը կարծեմք թէ հասած է։

Հայու հոգեբանութենէն դատելով գիտեմք թէ Հայք աւելի առաքինի և զօրաւոր են տակալու, համբերելու, մուռ անելու մէջ, իսկ երբ ներգործական շարժում մի անել, կորով դուրս հանել պէտք է, դանդաղելու վտանգն ունին։ Աւազանին քով համբերութեամբ նստիլ գիտեն դարերով, բայց ջրին մէջ նետուելու կը վարանին— «վաղիւ, մ'ի՛կ պահէն, ընդհուպ» ասելով օրէ օր։

Միթէ Պրովատիկէի աւազանին ջրերն բաւական յուզուած չե՞ն անգլիական զբրահաւորաց իջմամբ։

Հասցէ
Editor of "HAIK" 202 West 23d St.,
New York.
U. S. America.
կամ Redaction de la Revue "HAIK" ևն

ՊԱՏՄԱՆԻ
Տարեկան բաժնեգինն է
ամեն երկրաց համար
Երկու տալեր կամ տասն ֆրանք
Կանխիկ

ՏԷՐՈՒԹԻՒՆՔ
ԵՒ
ՍՈՒԼԹԱՆՆ

ՄՐՑԱՆՔ ԱՆԳԼԻՈՅ ԵՒ ՌՈՒՍԻՈՅ

Անցեալներս, մերձ ի սահմանագլուխն Սպանիոյ, չոգեշարժ կառախումբ մի իւր գծին վերայ գտաւ ցլուց երամակ մի, որ ի փախուստ աճապարեց բաց ի մէկէն՝ որ՝ աւելի աներկիւղ քան զիւր ընկերներ՝ եղջերազէն գլխովն ահագին հարուած մի տուաւ չոքեկառքին ճակատ առ ճակատ, և ճմլուեցաւ անոր երկաթէ ոտից տակ։

Ցուլն բաւական տկար է իմացականութեամբ գարշաւասոյր չոգեկառքն մի ահագին կենդանի կարծելու համար, սակայն և բաւական կռուասէր և քաջասիրտ է՝ այդպիսի մի վիթխարի, քան զինքն հարիւր անգամ ուժեղագոյն չոգեշարժ կառախմբին հետ ընդհարումէ չվախնալու համար։

«Նմանութեան մէջ յանցանք չկայ» կ'ասէ թրքական առած մի, ուստի և նեռելի է անչուշտ ասել թէ այդ ցլու նման է Սուլթան Համիտ, որ զիւր ասիական բիրտ ուժի եղջիւրներն յամառութեամբ ցոյց կուտայ եւրոպական տէրութեանց՝ մանաւորապէս անգլիականին՝ ճմլիչ գորութեան։

Համիտի քաջութիւնն, յամառութիւնը, անվախութիւնն սքանչելի է մէկ տեսակետով, ինչպէս յիշեալ ցլուն. ոսկայն աներկիւղութիւն կայ և աներկիւղութիւն։ Աներկիւղութիւն կայ որ դիւցազնական է, և աներկիւղութիւն ալ՝ որ յիմարական և հեռատեսէս ողբալի է։ Այն անվախութիւն որ յառաջ կուգայ հակառակորդին գերագոյն, անբաղդատելի կերպով հզօրագոյն, ուժն չհասկանալէ, վտանգներն չըմբռնելէ, և լոկ բաղդապատանութենէ, յիրաւի եղկելի է։

Լորա Սալիսբրի, գրովանդակ Մեծն Բրիտանիա ունենալով յիւր թիկունն, կը սպառնայ Սուլթանին, կը սպառնայ ի լուր համայն աշխարհի, թէ պիտի յօշոտէ գնորին կայսրութիւն եթէ չընդունի նա զերից տէրութեանց ծրագիրն։ Մի թէ Համիտ ազգական պատասխանատուութի՞ւն կը կարծէ այդ լուրջ սպառնալիք։ Ո՞ր Տէրութիւն պիտի իշխէ ձեռն տալ Սուլթանին արիւնաթաթաւ ձեռին և Անգլիոյ դէմ դնել եթէ սա ռմբակոծել սկսի զԿ. Պոլիս։ Ո՞չ ապաքէն Ռուսիա և Ֆռանսա պաշտօնապէս գործակից են Անգլիոյ ի մասին Հայկական բարեկարգութեանց խնդրոյն։ Ո՞չ ապաքէն Գերմանիա, Իտալիա և Աւստրիա-Հունգարիա ևս սչ-պաշտօնական կերպիւ յայտարարած են իրենց համամտութիւնն ընդ երից տէրութեանց։

Անգլիոյ Նախարարապետն, զայն ըսպառնալիք Դրան ուղղելէ առաջ, անշուշտ հաշուած էր ամեն բան, և գիտէր թէ ըսպառնալիքն ինչ ծախիւք և զոհողութեամբք պիտի ստիպուէր ի գործ դնել։ Անգլիա, յորմէ հետէ գրաւած ունի զԵգիպտոս, նուազ կարեւորութիւն կուտայ Կ. Պոլսոյ, և ամենալուրջ անգլիական թերթ մի, որպիսի է Spectator, կը խոստովանի թէ Մեծն Բրիտանիա այլ ևս հակառակ չէ Ռուսական յառաջխաղացութեան դէպ ի Կ. Պոլիս, դէպ ի Միջերկրականն, և թէ Անգլիա յօժարի պիտի տալ զՊոլիս Ռուսիոյ, անշուշտ ինքն ալ արժանաւոր բաժին կամ փոխարինութիւն ստանալով։

Ճշմարիտ է թէ Ռուսիա Անգլիականին չափ ուժգին լեզու չի գործածեր այս խնդրոյ մէջ, բայց Համիտ չարաչար կը յիմարի եթէ ադկէ կը հեռացունէ թէ Ռուսիա չուզեր որ Հայաստան ազատի և անմիջապէս ազատի Թրքի դժոխային լծէն։ Անգլիոյ և Ռուսիոյ միջեւ կայ մըրցում մի, ոչ թէ վասն զի Ռուսիա թեր կ'ելնէ Դրան, այլ վասն զի երկու մեծ տէրութեանց իւրաքանչիւրն կ'ուզէ ինքն յաւէտ վայելել զՀայաստան փրկած լինե-

լու պատիւն։ Եթէ Թուրքն շուշաբերի և չզիջանի Անգլիոյ պահանջմանց, վերջապէս պիտի հարկ լինի յանձնել զՀայաստան Ռուսիոյ։ Հաւանօրէն ընդարձակ խառնաշփոթութիւնք տեղի պիտի ունենան Վանի, Կարնոյ, Երիզայի կողմերն, և մեծագոյն քան զՍասնոյն կոտորածներ, և յայնժամ Տէրութեանց խնդրով Ռուսիա պիտի իջնէ իւր հզօր բանակաւ ի Հայաստան և վերջ պիտի տայ խժդժական տիրապետութեանն Սուլթանայ։

Կամ թէ Կ. Պոլսոյ մէջ աւելի շուտ տեղի պիտի ունենան այնպիսի մեծ յուզմունք և ընդհարմունք որ Անգլիա պիտի առնու զմայրաքաղաքն, և պիտի լուծեն Տէրութիւնք զարեւելեան խնդիրն։ Այս պատահականութիւն աւելի հաւանական և բաղձալի է։ Արիւնեղութիւնք նուազ կը լինին այս կերպով, և Հայաստանի խնդիրքն ալ կը կատարուի։ Հաւանականօրէն օսմանեան և ռուսական Հայաստանք ի մի կը ձուլուին և Զարին վեհապետութեան ներքոյ մի հայկական իշխանապետութիւն կը կազմուի։

Գաղանամիտ Թուրք կառավարութիւնն նախագուշակելով այս պատահականութիւններ՝ կը փութայ մնացած քիչ օրերուն մէջ խմել այնքան առատ հայ արիւն որքան կարող է—մինչև որ ճայթի իւայ դիտապատ։

Տեսնենք որն երկուց հնարաւոր պատահականութեանց տեղի պիտի ունենայ—Յուզմունք ի Կ. Պոլիս, անգլիական նաւատորմ և զրաւում Կ. Պոլսոյ, թէ յուզմունք ի գաւառս և ռուսական զրաւում Հայաստանի։

Ուէսթմինիսթրի դուքսն, իբրև նախագահ Սասնոյ համար հանգանակութիւն անող Յանձնախմբին, նամակ մի ուղղած է Լորտ Սալզպէրիի յորում ծանուցանելէ յետոյ թէ 1,000 ոսկի ևս կը յղէ Սասնոյ կարօտելոց բաշխել տալու խնդրանօք, կ'ասէ. «Մեր Յանձնախումբ չուզեր ոչէ անբանաւոր խնդիրք անել, սակայն չի կրնար չհաւատալ թէ Զերդ Լորտութիւն պիտի համամիտ գտնուի իրեն թէ առ Ն. Վ. Սուլթանն այլ ևս դիւանագիտական ներկայացումներ անելու ժամն անցած է, և թէ ա՛յլ միջոցներ կը պահանջուին այս ազգին պատուոյն և մարդկային ազգին շահուց համար։»

ՍԱՍՈՒՆ

(Շար. և վերջ տես թիւ 16)

8

1893ի ԴԷՊԲԵՐՆ

1893ի գարնան Քուրդք եկին բաժ հաւաքել Տալորիկէ։ Քան զսովորականն աւելի ծանր էին նոցա պահանջք և ցեղապետք աւելի մեծ թուով զինեալ որեար ունէին իրենց հետ։

Տալորիկցիք այս անգամ փորձեցին պարզ տրամաբանութեամբ մի ցուցնել Քրդաց ընթացքին թշնամական բնութիւնն։ «Բաժ վճարել յօժար եմք, ամին Քրդերուն, բայց վճարել ինչպէս և որքան կը վճարէինք ձեր հայրերուն։ Դուք ամ ըստ ամէ աւելի կ'ուզէք, և մերթ մեր ոչխարի հօտեր կը յափշտակէք մերթ մեր կարաւաններու վերայ կը յարձակիք, և մեր ճանապարհներ անապահով են այժմ ձեր երեսէն։ Յայտնապէս դուք զմեզ կործանելու կ'աշխատիք։ Եւ ինչպէս կը կարծէք թէ կրնաք մեր բարեկամ ու մերթշնամի լինիլ մի և նոյն ատեն։»

Քրդերն այս առաջարկութեան չհաւանեցան, և առանց բաժ ժողովելու անցան գնացին։

Գնացին բայց մեծագոյն զօրութեամբ վերադառնալու ուխտով։ Կատարեցին խորհրդակցութիւն, և ստացան Թուրք կառավարութեան քաջալերական յորդորներն։ Բաղրանցիք Խիյանցիք և Պասրքցիք միացուցին իրենց ոյժեր, իբր 8,000 զինուոր, և զՏալորիկ հիմնայատակ քանդելու եռանդով արշաւեցին։

Բանակին մեծ մասն պատերազմելու էր, իսկ այլ և այլ գնդեր պիտի կատարէին աւազակային գործողութիւններ։

Տալորիկցւոց լու եղաւ Քրդային չարժումն։ Տալորիկեան գիւղամբին իւրաքանչիւր գիւղն պարտէր ինքզինք պաշտպանել և զիւր ոչխարի հօտեր։ Բուն Տալորիկ գիւղէն ելան զինեալ Հայք, մի քանիներ ալ եկան միւս գիւղերէն; ընդամենն 120 հոգի, և գնացին դիմաւորել և դիմակալել Քրդաց գլխաւոր բանակին։

Հայոց հետ կային 40 կանայք ևս, որք իրենց արանց կամ եղբարց կը ծառայէին հաց ու ջուր բերելով ու քաջալերելով։

Հայք, բաղդատմամբ Քրդաց յոյժ սակաւաթիւ գոլով, լոկ պաշտպանողական էր իրենց կացք. քարերու ետև ցրուած էին, իրարմէ հեռու, և պատրաստ էին կը-բակելու։

Զորս օր մնացին դէմ առ դէմ, առանց կարեւոր գործողութիւն մի կատարելու։ Հայք կը սպասէին օգնութեան, նոյնպէս և Քուրդք կը սպասէին նոր գնդերու։ Քուրդք ստայօդ գիր յղած էին Զելանի Շէյխին թէ իւր եղբայր սպաննուած էր Հայերէն և գրգռեցին զնա։ Տիարպէքիրի կողմէն ալ Քրդաց ահագին բազմութիւն վեր ելած էր, և, կառավարութեան դրդմամբ, նոքա ալ կը դիմէին դէպ ի Սասուն։

Բայց նոր օգնութեանց ժամանումէն առաջ ընդհարման փորձք սկսան։ Հայք, տեղի տալով Քրդաց յառաջխաղացութեան, սարէ սար ինկան Ֆռֆռքարի ամուր դիրքն և անդէն ուժգնօրէն դիմադրեցին։

Քուրդք ալ ունէին լաւ դիրք, բայց երբ յառաջ խաղալ սկսէին, Հայք կը կրակէին իրենց սարերու ետևէն, և բաւական թուով Քրդեր գնդակոհար կ'իյնային։ Ուստի և Քրդերն կը ստիպուէին ետ քաշուիլ։

Հայոց դիրքն խախտելու վերջին փորձին մէջ Խիյանցի համբաւաւոր Մէհէի որդին Թմիկ, և ուրիշ ցեղապետ մի նոյն ցեղէն, Սէլիմ անուն, ինկան։ Ի տես այս սղբալի կորստեան, Քրդաց ողն կտրեցաւ, և սրտաթափ նահանջեցին։

Հայոց կողմէն հինգ այր սպաննուեցան և մէկ կին։ Քրդաց կորուստն հարիւր կամ աւելի եղած կրնայ լինիլ։ Նոքա իրենց սպաննուածներ հետ տարին։

Աւազակային խմբերն աւելի լաւ յաջողեցան. Տալորիկի գիւղերու հօտերէն հազարաւոր ոչխար յափշտակելով տարին, մինչ զինեալ Հայք սարերն էին մեծ մասամբ։

Քրդային այս արշաւանքի արդիւնքն, ասեն ինչ նկատելով, շատ տխուր և սրտաբեկիչ եղաւ Քրդաց համար։ Երբ օգնութեան հասնող միւս ցեղերն լսեցին երեք ցեղերուն ամօթահար նահանջն իրենք ալ ետ դարձան։

Խիյանցի Մայրն իւր իշխանաղն Թմիկի վերայ ողբ կարդաց—

Լէօ, որէ մէջէ սէր Թալօրի,
Ժպա պու դալէ մեր քուշքընէ։

որոյ իմաստն է սա— Տղա, ասի, եկու մ'երթար Տալորիկի վերայ, նոքա ի պապուց մարդ սպանող են։

Եթէ այդ Քրդեր իրենք իրենց մնային, եթէ կառավարութիւնն բանակի օգնութիւն չդնէր նոցա թիկունք, կարելի է ասել թէ ոչ 1894ին և ոչ բազում տարիներ պիտի իշխէին Տալորիկի վերայ յարձակում անել։ Այս ենթադրութիւն ստուգութիւն կ'առնու երբ յիշեմք թէ 1894ին այդ երեք ցեղերն, Խիյանցիք, Բազրանցիք և Պատրքցիք ի Տալորիկ չեկան, այլ գնացին Շէնիկ, Սէմալ և այլ գիւղերու դէմ։ Եկան ուրիշ ցեղերէ յետոյ, միայն այն ատեն երբ կանոնաւոր բանակն իրենց հետ եկաւ, միւս գիւղերու աւերումէն վերջ։

1893ի այս ընդհարման պատմութիւնն կը պարզէ մեզ կարեւոր կէտ մի Քրդային բարուց նկատմամբ։ Եւ այս է կարեւոր կետն թէ Քուրդք զինուորական գործողութեան ոգիէն բոլորովին զուրկ են։ Իրենք մի քանի հազար լինելով, կրնային 120 Հայոց դիմադրութեան յաղթել եթէ յանձն առնուին 100 կամ 200 մարդ զոհել իրենցմէ, յարձակելով անվեհեր։ Բայց ոչ, նոքա մեռնիլ չեն ուզեր, վասն զի չունին իսկական մի որոյ համար զգան թէ մեռնիլ կ'արժէ։ Նոքա ազգային շահ չունին, զոր կարենան դերադասել քան զիրենց անհատական կեանքն։ Նոքա կ'ուզեն յափշտակութեան շնորհիւ կեանք վայելել, այդ է իրենց բոլոր ձգտումն։ Հասկանալի է ուրեմն որ չուզեն մեռնիլ։ Եթէ պիտի մեռնի, ալ ինչ՞ օգուտ է իրեն ոչխարն ու կարպետն, կովն ու գորգն։

Թուրք կառավարութիւնն իւր բարձրագոյն յիմարութեան շնորհիւ միայն կարող է երազել թէ Համիտիյէ զօրագնդերն երբէք պիտի կարենան զինուորական դեր կատարել։ Սմենեւին չպիտի ուզէ Քուրդն պատերազմիլ երբ վտանգ կայ մեռնելու. Պիտի փախչի խազախներու ստուերէն, ու պիտի իյնայ անպաշտպան Հայ գիւղերու վերայ, ուր կրնայ անվտանգ կողոպտել և սպաննել։

9

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆՆ

Քրդերն հազիւ հեռացած էին Տալւորիկէն ահա կառավարութեան զօրքերն եկան և Տալւորիկի արտերուն մէջ բանակեցան օրերով, կերան խմեցին, աւերեցին արտերն և առանց ոևէ զինուորական գործողութիւն կատարելու վերադարձան ի Մուշ։

Այն ինչ քաշուած էր զօրքն երբ 18 հեծեալ ոստիկանօք եկաւ հարկահաւաք պաշտօնեայն, նստաւ ի Դիվալինք, իւրայնոց հետ կերաւ ու խմեց և զհարկերն հաւաքեց։

Սասունցիք գանգատեցան նմա թէ Քրդերն յափշտակած էին իրենց հօտեր։ Պաշտօնեային մանրամասն կերպով գրի առաւ թէ ո՛ր գիւղէ ո՛րքան ոչխար, արջառ, ջորի գողցած էին զՏալւորիկ գարնելու եկած աշիրէթներն։ Ուզեց որ գիւղերու գիւղապետներն իրեն ընկերանային երթալ գողցուած ստացուածքն ցոյց տալու, որպէս զի ինքն Քրդերէն ետ առնուր և յանձնէր տէրերուն։ Հայք, կառավարութեան դիտաւորութեան չվստահելով, յանձն չառին յղել զգիւղապետներն, այլ ուրիշ երեք գեղջուկներ։ Մելիք էֆէնտի, այդ է հարկահաւաքին անուն, գնաց գտաւ գող ցեղերն, և արդարեւ պահանջեց գօղոններն։ Քուրդք պատասխանեցին թէ իրենք կառավարութենէն յատուկ հրաման ունէին զՏալւորիկ կողոպտելու իրենց հաշուոյն, և թէ բնաւ պատրաստ չեն ետ տալու զաւարն։ Մելիք հնարեցաւ համոզել որ գոնէ 30 ջորի և այսինչ թուով ոչխար են ետ տան, զորս առաւ իսկ, և սակայն փոխանակ Հայերուն տալու, իրեն վերապահեց։ Աւելին կայ. Նա իր հետ տարաւ երեք Հայերն ալ, որք այլ ևս չտեսնուեցան։ Ոչ ոք գիտցաւ թէ ինչ եղանակաւ կառավարութիւնն կորսնցուց զանոնք։

10

1894ի ԿՈՏՈՐԱԾՆ

1893ի դէպքերէն յետոյ Քրդերն անօգուտ համարեցան առջի յարաբերութիւններն շարունակելու փորձ անել ի Սասուն։ 1894ի գարունն չեկան, որպէս սովոր էին, բաժ ժողովել։ Կը զգային թէ իբրև բարեկամ ներկայանալ չէին կրնար, պիտի չընդունուէին նախորդ տարւոյ արիւնայեղ ընդհարումէն և հօտերու յափշտակութենէն յետոյ։ Իսկ իբրեւ թշնամի գալ չէին իշխեր, զի «Տալւորիկցին սովոր էր անդստին ի նախնեաց սպաննել զիւր թշնամին։»

Թուրք կառավարութիւնն մեծաւ փութով յառաջ կը տանէր իւր դիւային բանակցութիւններն Քրդաց պետերուն հետ. կը քաջալերէր գանոնք նոր արշաւանք մի անելու, բայց դժուար էր այլևս համոզել միանգամ յաղթուածներն։

Քուրդք որոշապէս մերժեցին երթալ Սասնոյ վերայ եթէ Օսմանցւոց զօրքն արդեամբ աջակից չպիտի լինէր իրենց։

Բարբարոսաց այս պայմանն վերջապէս ընդունիլ ստիպուեցաւ քան զբարբարոսն չարադոյն թուրք կառավարութիւնն։ Զօրքերն շարժիլ սկսան Բաղէշէն, Կարինէն, Երիզայէն, Տիգրանակերտէն ի տես Քրդաց, և սոքա ևս գահավիժեցան իրենց լեռներէն դէպ ի Սասուն։

Սասուն քաջ գիտէր կառավարութեան թշնամական դիտումն, սակայն չէր կարող մտածել թէ սպառնալոց ջնջման դիտումն էր այն։

Արդէն բոլոր Սասնոյ գաւառն պաշարուած էր, և դաշտի գիւղերուն իւրաքանչիւրին մէջ հսկող զինուորներ դրուած էին որ ոչ մի հայ կարենար տեղէն շարժիլ Սասնոյ հետ յարաբերութեան մտնելու համար։

Տալւորիկի վերայ երթալէ առաջ զՇէնիկ, զՍէմալ այլովքն հանդերձ ջախջախել էր կառավարութեան ծրագիրն, ուստի քրդական այժերն անոնց դէմ գործել սկսան։ Քուրդք սկսան գործն Սէմալի հօտերն յափշտակելով։ Գիւղացիք զհետ պնդեցան, կռիւ եղաւ, յորում երկուսնեք մի քանի անձինք սպաննուեցան։ Հակառակ Քրդաց ահագին բազմութեան, Հայք կարող եղան յաջողապէս կռուիլ և պաշտպանել զինքեանս բաւական օրեր։

Քրդերն տեսնելով որ իրենցմէ ոչ սակաւ սպաննուողներ կը լինին, սկսան գանգատիլ, և յիշեցուցանել զօրավարին իրենց նիզակակցութեան պայմանն։

Հարկ եղաւ զօրաց միջամուխ լինիլ մարտին, և սկսան գոռալ թնդանօթք ի մեծ արհաւիրս Սասնոյ, որք, որպէս դրեթէ սպառած լինելով ռազմամթերք, փախան։

Եւ սկսան բարբարիկ նախճիրք։ Քուրդ և Թուրք պնդեցան զհետ փախստականաց և անզգամօրէն կոտորեցին այր, կին և երախայ։

Փախստականաց բազմութիւն մի ապաստանած էր յԱնտօք լեառն. հոն. ալ զօրքն հասան վերջապէս և խողխողեցին իրենց զոհեր։ Այդ դերագոյն ճգնաժամու մէջ է որ Շաքէ ժայռէն վար կը գահավիժի։

Ժողովուրդն կոտորելու և զգիւղերն այրելու գործողութիւններն աւարտելու մօտ էին Թուրք և քուրդ երբ ժամն հասած էր Տալւորիկի դէմ դարձուցելու ոյժերու մէկ մասն։ Պէլէքցիք, Պոզըքցիք, Խանվտըլի Տունն, Ուսվի Տունն և այլ ցեղք շարժեցան դէպ ի Տալւորիկ և սկսան կռուիլ։ Երեք կամ չորս օր հիանալի քաջութեամբ դէմ դրած էր Տալւորիկ այդ անհամար խաժամուժին երբ ամեն դեհէ սկսան նոր զնդեր և ցեղեր իրենց վերայ խաղալ. Բագրանցիք, Խիյանցիք և Պատքցիք ալ գօրաց ընկերութենէն սիրտ առած եկան, ինչպէս ուրիշ բազում մեծ ու փոքր ցեղեր, և Տալւորիկցիք, ի տես այս ահեղասահ հեղհեղմանց ամենուստ, փախչիլ ստիպուեցան։

Թշնամեաց ամբոխն մասնաւորապէս գիւային հաճոյքով կոտորեց Տալւորիկցի փախստականներն, այր կին և մանկտի։

Զօրաց և Քրդաց խառնիճաղանճն լեցուեցաւ Տալւորիկ գիւղի մէջ և սկսաւ կողոպտել, տներու մէջ խուզարկութիւններ կատարել պահուած գանձ և կարասի գտնելու, ամեն քար շրջեց, ամեն անկիւն զննեց, և ապա կրակ տուաւ գիւղին և հրճուեցաւ ի տեսիլ ամպաբերձ բոցերուն։

Մինչ թշնամեաց ամբաւութիւնն այսպէս զբաղած էր, փախստական Տալւորիկցիք որք սրէն ու գնդակէն ազատած էին ջանացին իրենց սահմանէն դուրս ելնել և ոչ-Տալւորիկեան հողի վերայ ապաստանիլ։ Ի գիւղերն չէին կրնար երթալ, ոչ ոք կ'իշխէր ընդունիլ զիրենք, զի խիստ հսկողութիւն կը տիրէր և անպատմելի անգթութիւն, ուստի քարայրներու, թփերու, ժայռերու միջև թաքեան մնացին անշշունչ։

Տալւորիկի գիւղից քայքայմանէն երեք օր յետոյ Քրդերն և Թուրք զօրականն բաշխեցին իրենց մէջ գաւարն, և Քուրդք մնաս բարով ասելով մեկնեցան դէպ իրենց լեռներն։

Այնուհետև դեռ 9 կամ 10 օր զօրքն մնացին, և ամեն օր կ'երթային փախստականներ որսալ սարերն ու անտառներն։

Երբ որսորդութեան գործն ալ աւարտած համարեցան, քաշուեցան գնացին, իրենց եաև թողլով արիւնաներկ սարեր, ծխացող գիւղեր, ջարդուած ծառեր ու որթեր և դիականց ահաւոր դարշահոտութիւն։

Այդ թախծագին օրերու մէջ է որ փախստականք ոմանք, իրենց թաքստի սարերուն ետևէն դիտելով զաւերեալ հայրենիքն, անհուն վշտով լի սրտէ ողբացին մելամաղձիկ մեղմ ձայնիւ.

Բագրանցիք ինկաւ հաւար,
Պատքցիք ինկաւ հաւար,
Հայեր փախան Անտօք սար,
Հայեր փախան Անտօք սար,
Մելքոն զԲարակ կոտրեցին
Գրգոր Սեմալ վառեցին։

Շուն Համոյից (Համիտէն) եկաւ լուր
Շուն Համոյից եկաւ լուր.
Հայեր գացին վալու դուռ,
Ասաւ Հայեր քաշէք սուր։

Արիւն թափաւ առուի պէս,
Արիւն թափաւ առուի պէս,
Ճանտակ ինկաւ ձկան պէս։
Դուն մ'ասեր այս բան վատ է,
Դուն մ'ասեր այս բան վատ է.
Աստուած Տաճկու զօրք դատէ։
Ամեն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԻՃԱԿՆ

(Շար. տես թիւ 15)

Քուրդ ազնուականին պատմութիւնն շատ ոգանչելի մեկնութիւն մ'է Հայաստանի թրքական վարչութեան վերայ։ Հոս տեղն չէ դայն լիուլի տալու։ Մէկ կամ երկու համառօտ քաղուած կը բաւէ։

ՀԱՐՑ. «Այժմ, Մոսթիկո, կ'ուզեմ լսել քո շրթունքէն և գրի առնուլ քո զարմանալի գործերուն մի քանին։ Կ'ուզեմ զանոնք ծանօթացունել գլխարկաւորներուն։

ՊԱՏԱՍԽԱՆ. Անշուշտ. ծանօթացուր զայնս երկոտասան ակրութեանց:

Հ. Կը ցաւիմ որ բանտարկեր են քեզ: Երկա՞ր ատեն է որ ի բանտի ես:

Պ. Ես ալ կը ցաւիմ: Հինգ ամիս է, բայց դար մի կը թուի:

Հ. Կ'երեւի թէ Հայերն եղան պատճառն:

Պ. Այո՛:

Հ. Անոնցմէ շատ շատերն սպաննեցիր, կիներն առեւանգեցիր, գիւղերն այրեցիր իրենց, որպէս կ'իմանամ:

Պ. (արհամարհանօք). Այդ բաներուն համար չէ ամենեւին որ բանտարկուած եմ: Հայեր կողոպտած լինելու համար չեմ կրեր պատիժ: Ամենքս ալ կ'ընենք այդ բաներն: Ես հազիւ երբէք սպաններ եմ, բայց միայն երբ դիմադրեր են: Սակայն Հայեր զիս մատնեցին և բռնուեցայ: Այդ ասել կ'ուզեմ: Այլ եթէ կախաղան հանուիմ, այդ պիտի լինի անոր համար որ զարկի և կողոպտեցի Թրքական Թղթատարն, և բռնաբարեցի զկինն Թուրք հարիւրապետի մի որ այժմ աստ ի Կարին է: Բայց ոչ Հայոց համար: Անո՞նք ո՛վ են որ անոնց համար նեղութիւն կրեմ:

Հ. Հայք երբէք դէմ կը դնե՞ն ձեզ երբ անոնց արջառն ու կանայքն կը յափշտակէք:

Պ. Ոչ յաճախ: Կարող չեն: Զէնք չըկայ նոցա, և գիտեն ալ որ եթէ կարենային իսկ սպաննել մենէ մի քանին, օգուտ չպիտի անէր իրենց, քանզի ուրիշ Քրդեր պիտի գային լուծել զվրէժ. բայց երբ մեք սպաննեմք զիրենք, ոչ մէկուն աչք կը խոլորին կառավարութեամբ: Տաճիկք կ'ատեն զանոնք, մեք ատելութիւն չունիմք: Մեք միայն ստակ և կողոպուտ կ'ուզեմք, և Քուրդք ոմանք կ'ուզեն նաև նոցա հողերն, իսկ Տաճիկք կ'ուզեն նոցա կեանքն: Քանի մ'ամիս առաջ ես Հայոց Գարա Քէօփրիւ գիւղին վերայ յարձակեցայ և ոչխարներ տարի: Մէկ հատ չթողուցի: Գիւղացիք, յուսահատած, մեր ետև ինկան և մի քանի գնդակ արձակեցին. բայց բան մի չէր: Մեք զհօտն դէպ ի Կարին վարեցինք հոն վաճառելու: Ճանապարհին կռիւ մ'ունեցանք Հայ Շէմէ գիւղին մօտ: Գիւղացիք գիտցան որ իրենց ազգայիններէն յափշտակած էինք ոչխարներն, և յարձակեցան մեր վերայ: Մենք միայն հինգ Քուրդ էինք, իսկ նոքա շատուոր էին, բոլոր գիւղն մեզ դէմ էր: Իմ մարդոցմէն երկուքն, միայն րայաներ, սպաննուեցան: Մեք սպաննեցինք 15 Հայ: Հայք յաջողեցան ոչխարաց քառասունն ազատել. մնացածն մենք տարինք ծախեցինք ի Կարին:

Հ. Շատ անգամ կը գործածէ՞ք զձեր նաճախներ:

Պ. Ոչ. ընդհանրապէս զմեր հրացաններ: Պէտք է ապրիմք: Աշունն կը հայթայթեմք որքան ցորեն որ պիտոյ է ձմռան համար, և դրամ ես: Արջառ կայ մեզ բայց անոր հոգ չեմք տանիր: Հայերուն կը յանձնեմք որ խնամ տանին և կերակրեն զանոնք:

Հ. Սակայն եթէ մերժեն:

Պ. Լաւ, ան ատեն անոնց խարն, ցորենն, տուներն կ'այրեմք, և ոչխարներն կը տանիմք, ուստի և չեն մերժեր: Գարունն ետ կ'առնումք մեր տաւարն, համրանքով կուտամք և համրանքով կ'առնումք:

Հ. Բայց եթէ ցաւ լինայ տաւարին մէջ:

Պ. Այդ Հայոց գիտնալիք բանն է. պէտք է մեզ վերադարձունեն ինչ որ իրենց յանձներ ենք, և կամ հատուցին: Եւ իրենք ալ գիտեն արդէն: Մեք չենք կրնար կորուստն յանձն առնուլ: Իրե՞նց ինչ է եղեր: Գրեթէ մեր ոչխարաց ամենըն ալ իրենցմէ են:»

Իւր արշաւանաց, սպանութեանց, առևանդութեանց և այլ պատմութիւններէն շատ մը լսելէ յետոյ, նորէն հարցայ, «Կրնա՞ս քո յանդուգն գործերէն քիչ մ'ալ պատմել Մօնթի'կօ, ի լուր տաանելկու աէրութեանց:» Եւ սորայս հետևեալ պատասխանն:

«Անգամ մի գայլին հարցան. պատմէ մեզ ի մասին ոչխարաց զորս լափեր ես: Եւ գայլն ասաց. ես հազարաւոր ոչխարներ կերած եմ, անոնցմէ որո՞ւն նկատմամբ կը հարցնէք: Այսպէս են իմ գործերս ալ. Եթէ ես երկու օր ամբողջ պատմէի և դուք գրէիք, տակաւին շատն անպատում պիտի մնար:

(Քոնթէմփորէրի Րիվիու.) ԷՄԻԼ ՏԻԼՕՆ,

(Շարունակելի)

ՆԱՄԱԿ Կ. ՊՈԼՍԷՆ

Կ. Պոլիս Սեպտ. 9, 1895

Գազանը կատղած է։ Գաւառներէն հասնող լուրերը զարհուրելի են։ Եւրոպացւոց միջամտութենէն առաջ՝ գազանը մեր միսը կ'ուտէր, միջամտութենէն ի վեր՝ մեր ոսկորներն կը փշրէ ու մեր ծուծը կը միսէ իւր թունաւոր ժանիքը։

Թուրք կառավարութիւնն աշխարհական և եկեղեցական մեր բանտարկեալներէն շատերը արձակեց, բայց այդ ալ եթէ նշանակութիւն ունի, զէշ նշանակութիւն ունի։

Ինչ՞ կ'ելնէ մի քանի հարիւր հոգի բանտերու մէջ պահելէն, քանի որ կրնայ անոր բազմապատիկը սովամահ կորուսանել, կամ թէ ուղղակի կողոպտել, տանջել, սպաննել, ինչպէս, Կամախի կողմերն արեր է դեռ քիչ օրեր առաջ։

Բանտէն ներս ու բանտէն դուրս նոյն բան է. բոլոր Տաճկաստանը բանտ մ'է, տանջանարան, սպանդանոց։

Ու այս անհաւատալի փոփոխութիւնը կը կատարուի ճիշդ այն ատեն երբ երեք հզօր տէրութիւն կը պահանջեն գազանէն ազատ թողուլ իւր որսը։

Ո՞վ է լսողը. գազանը մոլեգնած է։

Թուրքիան իւր պատմութեան ամենասոսկալի երեսներն գրեց այս երկու տարիներս։ Արդեօք ապագայ սերունդները պիտի կրնա՞ն հաւատալ երբ կարդան պատմութիւնը։

Գուցէ հաւատացողներ լինին թէ կառավարութիւն մը չուզէ իւր հպատակաց հաց տալ երբ սովէ կը մեռնին, բայց պիտի կրնա՞ն հաւատալ թէ թող տուած չլինի որ օտարներն ողորմին այդ թշուառաց։

Գուցէ հաւատացողներ լինին որ Թուրք կառավարութիւնը իւր հպատակաց ամենափոքր մէկ խնդիրքն լսելու, օրինական գործողութիւն մի կատարելու համար չաբաթներ, ամիսներ ու երբեմն տարիներ անցունէ ձգձգելով, բայց պիտի կրնա՞ն հաւատալ որ Եւրոպիոյ շնորհիւ ապրող քոսոտ Թուրքն Եւրոպիոյ երեք հզօր տէրութիւններու մէկ խնդիրն, ամենակարեւոր մէկ խնդիրն տարիներով ձգձգած լինի, և որ այդ հզօր տէրութիւնք ձգձգուած լինին գերմարդկային, գերիմացական, գերբարոյական, գերանգլիական, գերդաղիական, գերռուսական համբերութեամբ։

Ինչ՞ հրէշ, և ինչ՞ հրաշք։

Որ ուժովն ոանակոխ անէ անուժին իրաւունքն, այդ սովորական բան է. բայց որ երեք տէրութիւնք, իւրաքանչիւրն հզօրագոյն քան զԹուրքն, ունենան ոչ միայն ոյժն այլ և իրաւունքն իրենց կողմն, ու տակաւին խայտառակ կերպով խաղալիկ լինին Դրան տղայական բայց չարադէտ դիտաւորութեանց— այդ, կը խոստովանիմ չգիտեմ ինչ անուանեմ, հրէշայի՞ն թէ հրաշագան։

* * *

ՆԱՄԱԿ ՊԱԹՈՒՄԷ

Պաթում, Սեպտ. 4, 1895

Առ խմբագիր Հայքի, ի Նիւ Եորք.

Այս օրերս ծանօթացայ Ամերիկայէն այս կողմերն եկած երիտասարդի մը հետ, Պրն. Մ. Արոյեան, որմէ քանի մը հետաքրքրական բաներ իմացայ, և կ'ուզեմ հաղորդել ձեր ընթերցողներուն։

Պ. Ա. անցեալ ձմեռ մեկնած է Ամերիկայէն և առանց Պոլիս հանդիպելու պաշտած է Պաթում, Տփղիս, Երեւան և Վաղարշապատ։ Մնալով այդ տեղեր կասկածյարուցած է իւր վրայ, և քննութեան ենթարկուած է մի ամսոյ չափ ժամանակ, Երեւանում։ Քննիչն Երեւանի կառավարիչն է եղեր, թարգմանն՝ Պր. Հ. Մուշեղեան, մի լաւ Հայ։ Օրն երկու անգամ քննութիւն կը լինի, երկու ժամ տեւելով իւրաքանչիւր նիստ, և սակայն կասկածելի ոչ ինչ երեւան կ'ելնէ։

Ա. կուգայ Պաթում, Պոլիս գնալու։ Կը ներկայանայ ամերիկեան հիւպատոս Զէյմպերսին, և սա կը յղէ զԱրոյեան Թրքաց հիւպատոսին՝ վիզէ անելու իւր անցագիրը։ Թուրքն երբ կը բանայ անցագիրն և կը տեսնէ թէ Ա. Խարբերդցի է եղեր և Ամերիկայի հպատակ է դարձեր, անցագիրն կը նետէ բարկութեամբ և կ'ասէ «Կորսուէ, քեզի հրաման չկայ Տաճկաստան մտնելու. դուք խռովայոյզ մարդիկ էք։» Ա. կը դառնայ կը պատմէ Զէյմպերսի զայս բիրտ վարմունք, և սա զիւր փոխանորդ Պրիքս կը յղէ տեսնելի լաւ տեղե-

կանալու խրողութեան ։ Թուրք հիւպատոսըն կը յայտնէ թէ Ա․ չէր կրնար իւր հըպատակութիւն փոխել առանց հաճութիւն առնլու Սուլթանէն, այդ է օրէնքն ։ Այս մասին երկուց հիւպատոսաց միջև թըղթակցութիւնք կը կատարուին առանց արդիւնքի, և վերջապէս Ա․ կը մեկնի ի Կ․ Պոլիս վիզէ չեղած անցագրովն, բայց Զէյմպըրս հեռագրած կը լինի Պոլիս Թէռէլին, այնպէս որ Ամերիկեան դեսպանատան գավասն կուգայ և կը պաշտպանէ զԱ․ որ կարող կը լինի ազատ պըտտիլ Թրքաց մայրաքաղաքում ։

Զմոռնամ յիշելու թէ մօտերս երկու հայ ձերբակալուեցան Վաղարշապատի մէջ որք եկած էին զՍր․ Կաթողիկոսն սպանանելու ։ Հաստատուած է թէ մին Թուրք կառավարութենէ վարձուած է 500 ոսկի վարձքով ։ Երկուքն ալ այժմ բանտն են Երեւանում ․

* * *

ԼՐԱԳՐԱՑ ԿԱՐԾԻՔՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴՐՈՅՆ ՄԱՍԻՆ

ԼՈՆՏՈՆ, ԹԱՅՄԶԻ ԿԱՐԾԻՔՆ

(Սեպտ․ 16)

Բեդերպուրկէն կը տեղեկանամք այս առաւօտ, թէ մինչ Ռուսիա և Ֆռանսա անշուշտ իրենց բարոյական ազդեցութիւն պիտի ընծայեն այս երկրին ջանադրութեանց առ ի ստանալ բարեկարգութիւններն, երկուքն ալ դժկամակ են բուռն միջոցաց դիմելու ։ Աներկբայ նոքա կը դժուարանան ։ Այս երկիրն ալ կը դժուարանայ ։ Այդ է պատճառն որ Թուրքերուն թոյլ տրուեցաւ այսքան ընդ երկար ձգձգել ։ Ամե՛ն ժամանակ ծանր կուգայ մարդուս բուռն միջոցներու դիմել ։ Ինչ որ Սուլթանն հասկանալ պարտի, այն է թէ մարդիկ շատ բաներ կ՚անեն զոր անկեղծօրէն դժկամակ են անելու ։ Մինչև իսկ Սուլթան մի չէ կարող լիովին վայելել իւր դժկամակութիւն ։ Միջոցներու նկատմամբ տարբերութիւններ կրնան հարթուիլ, սակայն նպատակի բուն կէտն ընդունելու յամառ մերժողութիւնն, կամ գոնէ արեւելեան միջոցներ գործածելու ի դարման ամենածանր զեղծմանց, պիտի վերջապէս անհուն վնաս հասցունէ Սուլթանին ազդեցութեանն ու դիրքին ։

Ամենեւին հարկ չկայ որ բոլոր Եւրոպա ձեռնարկէ եւրոպական վճիռներ գործադրելու ։ Շատ անգամ աւելի դիւրին է որ մէկ տէրութիւն գործէ և միւսներն լոկ բարոյական կերպով սրբագործեն ձեռնարկն։

Փոխանակ Սուլթանին քաջալերութիւն մի լինելու որ սիրտն կարծրացունէ, այս գերազանցապէս գործնական կարգադրութիւնն պարտէր համոզել զինքն թէ իրեն լաւագոյն քաղաքականութիւնն կը լինի շուտով համաձայնիլ ստոխին հետ ։ Եւրոպական կառավարութեանց և ազգաց ընդհանուր զգացումն աւելի քան բաւական է ո և է միակ տէրութեան գործողութեանն տալ պահանջուած հեղինակութիւնն ու բարոյական երաշխիքն՝ զայն արդիւնաւոր անելու համար ։ Պէտք է Սուլթանին նման աչքը բաց իշխանի մի պարզ երեւէր թէ այս երկիրն (Անգլիա) կատակ չաներ, և թէ, եթէ գործօն քայլեր առնլու մղուի, այդու գործնականօրէն Եւրոպայի յանձնարարութիւնն կատարած պիտի լինի ։

Ի՞նչ կ՚ասէ DAILY NEWS․

«Թուրք կառավարութիւնն զԵւրոպա նախատած եղաւ առաջարկելովն որ բարեկարգութեան ղեկավարութիւնն լոկ տաճկական ձեռաց մէջ մնայ ։ Տէրութիւնք, կ՚ատանք, պնդած են որ Յանձնաժողովոյ անդամոց գոնէ երեքն Եւրոպացի լինին․ Այս առաջարկութիւն իբր փորձաքար կը ծառայէ օսմանեան անկեղծութեան, և յայտնապէս ծանր անհամաձայնութիւն յառաջ բերած է Կառավարութեան մէջ ։ Ի մի կողմն է պալատական կուսակցութիւնն որ կը յամառի «ոչ մի զիջողութիւն» անելու ոչ արդարութեան և ոչ իսկ հարկին․ Ի միւս թեր կը կենան Սուլթանին մի քանի լուսամիտ խրատիչք, որք կը տեսնեն թէ Եւրոպիոյ համբերութիւնն իւր վերջին սահմանն է հասեր, և թէ օսմ․ կայսրութիւնն կործանման եզրն կը կենայ ։

«Սուլթանն բանիմաց փոքրամասնութեան հետ չէ, յայտնի է ։ Նա բռնապետութեան և հարստահարութեան էականներէն ոչ ինչ կ՚ուզէ ձեռքէ հանել ։ Իւր փորձն ի սերմանել անհամաձայնութիւն

երեք տէրութեանց մէջ տղայի հնարք է, տղայական իմացականութեան մի հնարիւքըն յառաջ տարուած ։ Քան զամենայն յիմարականն իւր փորձոց է զմեզ դող հանելու փորձն նկատմամբ Հնդկաստանի ապահովութեան՝ բոլոր ուղղելով առ մահմետական իշխաններն ի նպաստ իւր։ Տագնապի այս բոլոր նշաններն խրախուսիչ են, այնու զի կը ցուցնեն թէ եւրոպական ճնշումն ի Կ. Պոլիս ոչ միայն ուժով է այլ և ամուր ։

(ՏԷՅԼԻ ՆԻՒԶ) Հետաքրքրական և զբօսալի է տեսնել թէ մինչև իսկ այս ձգտեալ և նեղ պարագայից տակ Սուլթանն մոռցած չէ իւր տղայական խորամանկութիւններն զորս քաղաքագիտութիւն կը կարծէ ։ Այն պահանջն որոյ ամենապինդ յամառութեամբ կ'ընդդիմանայ Սուլթանըն այն է որ բարեկարգութեանց գործադրութիւնն եւրոպական վերատեսչութեան տակ կը դնէ ։ Բայց այս բացարձակապէս անհրաժեշտ է ։ Եթէ Համիտ չի զիջանիր իսկոյն, պէտք է անգլիական նաւատորմն ի Տարտանէլ մտնէ և ռուսական զօրքն գրաւեն զՀայաստան ։

Ին՞չ կ'ըսէ ՆՕՎՕՍԹԻ ռուս լրագիրն ։

Նա կը պնդէ թէ Ռուսիա և Ֆռանսա պէտք է Անգլիոյ հետ համաձայն գործեն «վերջնոյս մտադրեալ նաւային ցոյցին մէջ ի Տարտանէլ ։» «Ռուսիա» կ'ըսէ քաղաքամայրի այս թերթ, «պարտական է թէ' իւրային շահուց համար և թէ Անգլիոյ իբրև իւր ընկերի Հայկական գործոց մէջ, գործօն մասնակցութիւն ունենալ ու և է բռնադատիչ միջոցներու որք կրնան ձեռք առնուիլ առ ի բերել զՍուլթանն և զիւր խրատիչներ իրենց պատասխանատուութիւնն ըստ արժանւոյն զգալու ։ Այս սոյն նկատմունք կը պատկանին նաև Ֆռանսայի ։ Նկատել պէտք է և զայն թէ Անգլիոյ կողմէն անհատական ցոյց մի սխալ պիտի համարուէր ի Թուրքիոյ իբր թէ երեք տէրութիւնք համաձայնութենէ և յարակցութենէ թերանային» ։ Նօվօսթի կը յաւելու թէ որչափ շուտով որ Անգլիոյ, Ռուսիոյ և Ֆռանսայի միջերկրական նաւատորմիղներն ի Տարտանէլ ժողովին այնքան լաւ կը լինի, և յայնժամ Դրան ներկայացուելու վերջնագիրն պէտք է ոյժ առնու երեք տէրութեանց դեսպաններու յետս կոչմամբն ․

Ին՞չ կ'ըսէ ՎՕՍԻՇԷ ՑԱՅԹՈՒՆԿ գերմանական լրագիրն ․

«Հայկական գործերն, կը գրէ նա, են տակաւին ուր որ էին, և կը սկսի ձանձրալի հղնիլ օր ըստ օրէ արձանագրել Դրան պէսպէս կասկածները։ Ալ ժա'մ է վճռական քայլ մ'առնելու, այդ լինի Պէռլինեան դաշնագիրն ստորագրող տէրութեանց համանման մէկ ծրագրի յղումն, լինի դեսպանախորհրդոյ մի հրաւիրումն, լինի նաւային ցոյց մի Կ. Պոլսոյ առջև, կամ թէ մինչև անգամ հայկական գաւառաց գրաւումն ։ Դուռն յամառեալ կը մնայ, այն յուսով թէ տէրութիւնք գուցէ չկարենան իրեն դէմ առնելու քայլի մասին համաձայնիլ, Սակայն պիտի տեսնէ ի մեծ վնաս իւր, թէ աւելի դիւրին պիտի լինի համաձայնութիւնն երբ Թուրքիոյ պաշտպանութիւնն խնդրոյ տակ կ'իյնայ ․

Շիքակոյի Թայմզ-Հէրալտ կ'ըսէ հեգնական շեշտով ․

Անգլիա անքաղաքավար է ։ Թուրքիա է այդպէս ասողն ։ Սուլթանն զգայնիկ կը լինի կոր ։ Նա դառնապէս գանգատեր է ։ Եւ յունկն Ռուսիոյ ու Ֆռանսայի թափեր է նա իւր դառնագին գանգատանք ։ Մեծին Բրիտանիոյ կացքն (attitude), կ'ըսէ, «անվայել է և անպատշաճ» ։ Աւելի' դէշ, կը պնդէ նա, մինչև իսկ վնասաբեր է իւր ազդեցութեան ։ Նա կը դիմէ Ռուսիոյ և Ֆռանսայի որ խօսին Մեծին Բրիտանիոյ՝ եղանակաւորել իւր կացքն, լինիլ աւելի մարդավարի և յարգալիր, և մանաւանդ զիւր պէտգալի թնդանօթներն քիչ մ'աւելի աչքէ հեռու պահել, և շատ մօտէն չզննել Մշոյ և Սասնոյ քայքայեալ տներն ։

ԿԱՄԱԽԻ ԴԷՊՔԵՐԸ

«Ամենապատիւ Ս. Պատրիարք ․

Կ. Պոլիս ․

Բարձրաշնորհ և Սրբազան Տէր ․

Աւազակաց խումբ մը, որոյ ինչ ազգէ ըլլալը անյայտ է, անցեալ երկուշաբթի օր, քաղաքէս վեց ժամ հեռաւորութեամբ, դէպի Կամախ՝ կողոպտած էր զինուորական մանանբայծ գայմագամ մը և գօլ-աղասի մը և սպաննած էր շավուշ մը ։

Տեղւոյս կառավարութիւնը և Միւշիրը, շրջաբնակ քիւրդերու վկայութեան վրա համոզում գոյացնելով, թէ այդ աւազակներն հայ են, ձիաւոր, հետեւակ, և թնթանօթաձիգ զօրքերով կը պաշարեն Կամախի բոլոր լեռներն։ Զօրաց այդ ըստուար բազմութիւն, միացեալ շրջակայ Թուրք և քուրդ բնակչաց հետ, մտնելով Գառնի, Թաւկներ, Թորդան, Աւագ-վանք, Սեպհոյ ս. Լուսաւորիչ և այլ հայաբնակ գիւղեր ու վանքերը՝ կողոպտեց նոցա ընպարեղէններն, այծ, ոչխար, եզ, կով, և ամեն ինչ որ ուտելի է։

Հետզհետէ անլուր խժդժութեանց գոյժեր կը հասնին, Լուսաւորիչ և Աւագվանք իսպառ կողոպտուած են և վանաբնակք անյայտացած։

Լուսաւորչի պահապանն ու հովիւը սաստիկ գանակոծուած. հրացանի փողը կուրծքերնուն դրած կը սպառնան սպաննել, եթէ չըսեն մի առ մի ամսէ մը հետէ վանքը այցելողներու անուններն, զՏիկին Մարթա պառկեցնելով կազ կը բերեն և կը սպառնան այրել, խոստովանութիւն մը առնելու համար. ապա խարշած հաւկիթ կը կապեն նորա անութներուն տակ չարչարելով խօսք քաշելու համար։

Եղկելի տանջեալներն մի առ մի ըսեր են անուանքն այն անձանց, որք ամսէ մը ի վեր հոն յաճախած են ուխտի համար, ուստի և Երիզացի 12ի չափ անձինք ձերբակալուելով բանտարկուեցան և ձերբակալութիւնը կը շարունակուի։

Այլուր գանակոծեալներու կապոյտները անյայտացնելու համար սուրի ծայրով կը ճեղքտեն նոցա կապոյտներն։

Հառափուլ և Մարեղ գիւղերն անտանելի տանջանաց մատնուած են. այդ բազմաթիւ զինուորներ և պաշի-պօզուքներ, Երիզայէ նպար չընդունելով, գիւղացւոց բոլոր ունեցածներն կը յափշտակեն։

Մօտալուտ վտանգ մ՚ալ կը նշմարուի քաղաքիս համար, վասն զի, հակառակ օրինաց և կամաց վեհ. Սուլթանին, ամեն ապօրինութիւնք ի գործ կը դրուին։

Անյապաղ օգնութիւն կը խնդրեմք առաջն առնելու վտանգի մը, որ շատ եղերական կրնայ ըլլալ։

Առաջնորդարան Երիզա,

Խառն Ժողով»

(ՄՇԱԿ)

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Լոնտոն, Սեպտ. 27. Պուլկարիոյ Վառնա քաղաքէն հեռագիր մի կ՚ասէ թէ Անատոլի մէջ, ի Սուրիա, մահմետականք, զէնք որոնելու պատրուակաւ, խուժեր են Հայոց եկեղեցին։ Տասն Հայ սպաննուած են կամ վիրաւորուած։

Կ. Պոլիս Սեպտ. 9. Ըստ Սեբաստիայէն հասած լրոյ՝ Թոքաթի հանրային դատախազն, մահմետական, Սեբաստիոյ ճանապարհին վերայ յարձակում կրած և ըսպաննուած է ի ձեռն աւազակային խմբի մի զոր հայ եղած լինիլ կ՚ենթադրեն։

Կ. Պոլսէն կը հեռագրէ Ռիւթէրի գործակալութիւնն թէ ներքին գործոց նախարարն հրահանգ տուած է նահանգային իշխանութեանց անյապաղ յղել ցուցակն այն միջոցներուն որք կրնան գործածուիլ վերապահեալ զօրաց փոխադրութեան համար, ի պահանջել հարկին։

Լոնտոն, Սեպտ. 14. Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ Մուրատեան անուն հայ մի, որ վերջերս ամերիկացի եղած էր, հետ ցամաք հանելուն ի Պոլիս կալանաւորուած էր այն կասկածով թէ յեղափոխականաց մէկ պատուիրակն է։

Միացեալ Նահանգաց դեսպան Թէրէլ խիստ պահանջեց որ բանտարկեալն անմիջապէս արձակուի, որովհետև Թուրք հողի վերայ ոչ մի յեղափոխական արարք ունեցած էր։ Այս պահանջման վերայ Մուրատեան բանտէն հանուեցաւ բայց, Թէրէլի հաւանութեամբ, արտաքսուեցաւ ի Թուրքիոյ։ Ոստիկանք, ի խուզարկելն զՄուրատեան, գտած են նորա քով 40 նամակ և 2 րիվօլվէր։

Լուր կայ իբր թէ Դուռն ընդունած է Մայիս 11ի Ծրագիրն, սակայն Լ. Սօլզպէրի աւելի ապահով կերպով զհսկող Յանձնախումբն կազմաւորելու վերայ պիտի պնդէ։

Կ. Պոլսէն իմացուած է թէ Անգլիոյ դեսպանն իւր կառավարութենէ հրահանգ ընդունած է այլ ևս չպնդել Մայիս 11ի ծրագրին որդեգրման վերայ Դրան կողմանէ։ Ծրագիրն իբրև չափազանց կընճռոտ և անգործնական դատապարտուած

է դիւանագէտներէն ի Կ. Պոլիս, և հաստկցուած ալ է թէ Լորտ Սոլզպէրի զայն բոլորովին պակասաւոր կը նկատէ էական երաշխեաց մասին յապահովել եւրոպական բաւական մասնակցութիւն։

Ծովակալ Սէյմուր Պէշիքայի ծոցում է. Կ. Պոլսոյ մէջ մեծ մտահոգութիւն կը զգացուի թէ նորա ներկայութեան համար և թէ Հայաստանի սահմանագլխուն վերայ ռուսական զօրաց ներկայութեան պատճառաւ։

Կ. Պոլսէն Սեպտ. 3ին, հետեւեալ պաշտօնական հեռագիրն հաղորդուեցաւ եւրոպական թերթերուն։— «17 ծպտեալ Հայեր վերջերս յարձակեցան տեղակալ Բէշիտ Պէյի վերայ մերձ ի Բէմահ, և յետ սպանելու մէկ ոստիկան և դեռ ուրիշ ուղեկից մի՝ փախան 300 օսմ. լիրայով և այլ իրօք։ 60 զինուոր յղուեցան պէհտնոցա։ Զանլի վանքի մօտ հասան աւազակաց ետեւէն և սուր նախամարտ մի տեղի ունեցաւ, յորում աւազակաց չորսն գընդակահար մեռան, մին վիրաւորուեցաւ և երեք կալանաւորուեցան։ Զօրքէն երկու սպայ և երեք մարդ թեթեւ կերպով վէրք առին։ Գողցուած դրամն և այլ իրքն գտնուեցան աւազակաց քով, որք խոստովանեցան թէ իրենց խումբն կազմուորեալ էր խռովութիւն ստեղծելու նպատակաւ։ Բոլորովին անճշմարիտ է թէ երկու վաշտ զօրք յղուած էին զհետ աւազակախմբին, և թէ կայսերական գնդերն ջարդեր էին գիւղեր և վանքեր։»

Կլատսթոնի Զէսթըրեան ճառն զՀայաստանէ շուտով պիտի հրատարակուի ֆռանսերէն և գերմաներէն եւ՝ զոյգ ընդ Մաք.Քոլի ծանօթ աշխատասիրութեան։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՒՄ

Ոստիկանութեան նախարարութիւնը կը ծանուցանէ թէ Հալաճեան խանի սենեկապետ Դաւիթ, եղբայրը Գրիգոր, Բերա Պօսթան-Պաշը աբառթըմանի դռնապան Թորոս, Բերա Սու Թէրազի փողոց դռնապան Համբարձում, սաղձագործ Պաղտասար և Բերա-Բալէս օթէլի սպասաւորներէն Պօղոս, որոնց համար յետ քննութեան հաստատուած է թէ անցեալներ Իւսկիւտարի Պաղլար-Պաշիի թաղէնէն գիշեր ատեն տուն վերադառնալու պահուն րիվոլվէրով սպաննուած Ռամբրէ էֆէնտիի սպանութեան գործը պատրաստելու և մարդասպանները պահելու գործին մէջ մեղսակից են, ձերբակալուած են և իրենց նկատմամբ կատարուած քննութիւնը աւարտելու եւ խնդիրը դատական պաշտօնէութեան յանձնուելու վրայ է։

Նոյնպէս ձերբակալուած են Թէքիրտաղցի կօշկակար Գալուստ և ընկերը Խաչիկ։

Յետ քննութեան հաստատուած է թէ ասոնցմէ Գալուստ դաշունով սպաննած է Տպագրական Տեսչութեան դիւանին քարտուղարներէն Համբարձում էֆէնտին, երբ սա Կէտիկ-Փաշա գիշերուան ժամը մէկուկէսին երկուքին տանը առջեւ կը պտըտէր իր մօրը ու կրտսեր քրոջը հետ։ Իսկ Խաչիկ տեղեկութիւն և մասնակցութիւն ունի սպանման գործին պատրաստութեան ու գործադրութեան մէջ։ Ասոնց նկատմամբ ալ կատարուած քննութիւնը աւարտելու և խնդիրը դատական պաշտօնէութեան յանձնուելու վրայ է։

ՀԱՅՐԵՆԻՔ

Զէյթունի մէջ գտնուած զօրանոցը նորոգելու և առ այդ հարկ եղած գումարը ծախսելու համար կայսերական իրատէ մը արտօնութիւն տուած է։ ՀԱՅՐԵՆԻՔ

«Մշակի» կը գրեն Կ. Պոլսէն.

Մեր Պատրիարքին ժողովրդականութիւնը աւելի և աւելի կը տարածուի Յունաց մէջ իսկ։ Դէպք մի տար ապացոյց կուտայ։ Քանի մը օր առաջ Կ. Պոլսոյ մէջ մեռաւ համբաւաւոր հարուստ յոյն մը, Պ. Զարիֆի, որ ահագին գումարներ կտակած է յոյներու բարեգործական հաստատութեանց։ Մեր Պատրիարքը իր կողմէն յուղարկաւորութեան հանդէսին ղըրկեց իր փոխանորդը, այցաքարտով մը։ Պ. Զարիֆիի ընտանիքը, երբ Պատրիարքին այցաքարտը կ՚առնեն, կը համբուրեն ակնածանքով և ճակատնին կը դնեն։

Հոս այցաքարտ, ուրիշ տեղուանք ալ օրհնութեան կոնդակներ։ Անցած շաբթու Պատրիարքը օրհնութեան չորս կոնդակ ղրկեց Լօնտօն մեծանուն անձնաւորութեանց։ Կոնդակներն ֆռանսերէն թարգմանութեամբ դրուեցան արծաթէ տուփերու մէջ. իւրաքանչիւրին վրայ դըրուած է անունն անոր, որուն կը ղրկուի։

Հայ Մամուլն ողբալի կորուստ մ'ունեցաւ յանձին Տիկին Մելիք-Աղամալեանի Արծրունի, որ վերջերս վախճանեցաւ ի Տփղիս։ Տիկինն ողբացեալ խմբագիր Արծրունւոյ կենակիցն էր և նորա գրական ակնակիցն, թէև հրապարակի վերայ չէր երևէր այնպէս. Արծրունի ինքն երախտագիտութեամբ խոստովաներ է թէ Տիկնոջն ներշնչմանց որքան բան կը պարտէր ինքն։ Նշանաւոր գործիչներու արժանաւոր կենակիցք մեծ դեր կը կատարեն իրրեւ ճշմարիտ օժանդակ իրենց արանց գործունէութեան, սակայն յաճախ լռիկ կերպով։ Այդպէս էր Տիկին Պիտարք. Այդպէս է Տիկին Կլատսթօն։ Մեր Ազգի մէջ մեծ պէտք կայ կին գործիչներու։ Մաղթենք որ հանգուցեալ Տիկնոջ նմաններն շատնան մեր մէջ։

Ռուսական լրագիրն «Նովոյէ Վրիմիա» կ'ասէ թէ աշունն հաւանականօրէն պիտի բերէ ընդոստուցիչ փոփոխութիւն Եւրոպիոյ միջազգային քաղաքականութեան մէջ։ Այս թերթն որ ցարդ ետ կեցած էր հոյկական արհաւրաց մասին հրատարակութիւններ անելէ, այժմ իւր էջերուն մէջ կուտայ Կ. Պոլսէն ուղղուած թղթակցութեանց ուր մանրամասն կը պատմուին հայ բանտարկելոց և փախստականաց տեղեկագրութիւնք։

Սասնոյ սովելոց համար կազմուած Նիւ Եորքի ամերիկեան Յանձնախումբն, որոյ գանձապետն է Տ. Սփէնսըր Թրասք, 1,000 տոլարի առաջին փոխանցումն արաւ առ Ուէսթմինիսթրի դուքսն, ի Լոնտոն, որ անգլիական նմանօրինակ Յանձնախմբի մի նախագահն է։

Քոնքորտէն կը գրեն մեզ, Սեպտ. 19—

Տէր խմբագիր,

Աւասիկ ներփակեալ նամակաւս կը ղրկեմ 12 տոլար 13 սենթ ի նպաստ մեր Սասունցի եղբարց, զոր տեղւոյս Հայերէն հանգանակեցինք. կը ղրկեմք ձեզ Ձեր հրահանգին համեմատ, ընդունեցէք մեր ջնչին օգնութիւնը։ Մնամ յարգանօք.

Մ. Պետրոս Եղոցեան

Նիւ Եորքի «Քրիսչըն Հէրալտ» կրօնական թերթն, (զոր պէտք է չշփոթել տխրահռչակ Հէրալտի հետ) գործիք ընտրուած է Սասնոյ համար հանգանակութիւն մ'անելու, որոյ նախաձեռնակ եղող ամերիկացիք կը յուսան 20,000 տոլար հաւաքել։ Նոքա նախ Բ. Դրան հետ բանակցութեան մտան արտօնութիւն ստանալու համար որ նշանաւոր երէցն Թալմէճ այցելէր ի Հայաստան, սակայն Դուռն երկարօրէն քաշ ձգեց խնդիրն այնպէս որ վերջապէս որոշուեցաւ յղել ուրիշ մէկն, երիտասարդ թղթակից մի, որ թէ լուր հաղորդէ Ամերիկացւոց և թէ օգնէ մկսիօնարաց՝ նպաստից բաշխման գործոյն մէջ։

Տիար Առաքել Ծատուրեան 100 լիրա նուիրած է Անգլիոյ Յանձնախմբին յօգուտ Սասնոյ սովելոց։

«Արծիւ Պաշտպան Հայաստանի» անուն նոր ընկերակցութիւն մի հաստատուեր է ի Բարիզ, որոյ գանձապետն է Տ. Խ. Ներսէսեան և քարտուղարն Տ. Ղարիպեան.

Ցոյժ կը խնդրեմք «Հայքի» սիրելի ընթերցողներէն որ բարեհաճին յղել և կամ տեղեկացուցել մեզ մէջ. Կարապետ Այվազեան Հիւսէյնիկցիին հասցէն։ Գրեթէ երեք տարի է Ամերիկա գալը. 1893 Մայիս 3ին Քոնքորտէն Շիքակոյ գնաց Յուցահանդէսին ժամանակը։ Նա է կարճահասակ, նիհար գրեթէ 45 ամեայ ճերմակ մազով ծերունի մը. թէ մինչ ցարդ ապաւինած լինի Շիքակոյ, մասնաւորաբար կը խնդրուի հոն տեղի սիրելի հայրենակիցներէն բարեհաճին հարցաքննել յիշեալ անձ և տեղեկացնել մեզ հետևեալ հասցէիս որով մեծ երախտիք մատուցած կը լինին մեզ։

1249 Elm St., Manchester, N. H.

Գ. Ա.

Սասոն անունով անգլիերէն երգ մ'ի լոյս ընծայուեցաւ հանդերձ ձայնագրութեամբ եղանակին, խօսք Տ. Ասուպի, եղանակ Տ. Սարկաւագեանի։ Անգլիերէն գրուած է ձայնագրութեան տողերուն ներքև. իսկ հայերէն՝ չորրորդ երեսին վերայ՝ զատ։ Գինն է 25 սենթ։ Դիմել առ.—H. Sargavakian, 422 Fountain St. Provedence, R. I.

Ոմանք տոլար թղթադրամ կը յղեն մեզ նամակի ծոցով, որ երբեմն կը կորուսուի։ Պէտք է կա՛մ Բէճիսթրը անել նամակն կամ մրնի օրտըր յղել առ ի ապահովութիւն։

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԹԻՒ 1.

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

Այս հրատարակութիւն անգլիերէն լեզուաւ տեար մ'է, 48 երեսէ բաղկացած, որ կը պարունակէ (1) մի նախաբան, (2) կոտորածին և Սասնոյ Նկարագիրն Տալորիկցի վկայի մի շրթունքէն. (3) Կլատոթոնի վերջին ատենախօսութիւնն զՀայաստանէ. (4) Տիլօնի մեծ յօդուածն, որ արտատպեալ է Քոնթէմփորէրի Ռիվիւի հրատարակչաց յատուկ թոյլտուութեամբ։

ՀԱՅԵՐԷՆ ԹԵՐԹԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ՄՇԱԿի տարեկան բաժնեգինն է 5 տոլար հասցէն է "խմբագրութիւն Մշակի"(MSCHAK) Թիֆլիս, Կովկաս, Ռուսիա։ ԱՐՁԱԳԱՆՔԻ և պայմանն ու հասցէն նոյն է։

Մեր նշանաւոր ուսումնական թերթերն են ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑ և ԲԱԶՄԱՎԷՊ։ Տարեկան բաժնեգին իւրաքանչիւրին է 2 տոլար։

ԲԱԶԹԱՎԷՊի հասցէն է,
Redaction du BASMAVEP
St. Lazare, Venis, ITALIE

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՑի հասցէն է,
Redaction du HANTES,
Conven Mechitariste,
VIENNE, AUTRICHE

ԼՍՈՒՄԷՆԻ-ԱՐՄԷՆԻՈՑ բաժնեգինն է 3 տոլար 75 սենթ. հասցէն է—
33 De vere Gardens W, LONDON, ENG.

«ԱՐԱ»ի Տարեկան բաժնեգինն է երկու տոլար.
Հասցէն է. Editor of ARA,
Chogda, Bengal, INDIA.

ՀԱՅՐԵՆԻՔ

ՕՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Կը հրատարակուի տարին 300 թիւ։ Օտար երկրաց համար տարեկան բաժանորդագինն է 25 ֆրանք կամ 5 տոլար։ «ՀԱՅՐԵՆԻՔ» Թրքահայոց լաւագոյն լրագիրն է։ Հասցէն է—
Le Journal HAIRENIK,
Galata, Constantinople, Turquie

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԱՄՈՒԼ»

Հանդէս կիսամսեայ

25*րդ տարի*

Տարեկան բաժնեգինն է, օտար երկրաց համար 17 ֆրանք կամ 3 տոլար 40 սենթ։ Հասցէն է—
M. M. MAMOURIAN,
Smyrne, TURQUIE

Կը խնդրեմք որ մրնի օրտրրի կամ մանտա տը փոսթի միջոցաւ խմբագրութեանը դրամ յղողներն՝ Նիւ Եորքի փոստ օֆիսին Station E (Եդ ճիւղ)ին ձեռքով զայն մեզ հասցուներլու հրահանգ տան իրենց քաղաքի թղթատան։ Այսպէսով մեծ դիւրութիւն ընծայած կը լինին մեզ։

Տիար Տ. Շուշան հաճած է յանձն առնուլ «Հայքի» գործակալութիւնն յՈւսար։ Բաժանորդք կրնան նմա վճարել գինն։

Ed. LEGOLL

ԴԵՂԱԳՈՐԾ

286, 7դ Էվինիու Նիւ Եորք
26դ և 27դ փողոցներուն միջև
Դեղագրեր կը շինուին խնամով

BUSH & Co.

ՊՈՒՇ ԵՒ ԸՆԿ.

(*Հաստատեալ ի 1849*)

65 Front St., Worcester, Mass.
Դեղագիրք խնամով կը պատրաստուին. և չափաւոր գնով

PATENTS
CAVEATS, TRADE MARKS
COPYRIGHTS.

CAN I OBTAIN A PATENT? For a prompt answer and an honest opinion, write to **MUNN & CO.**, who have had nearly fifty years' experience in the patent business. Communications strictly confidential. A **Handbook** of Information concerning **Patents** and how to obtain them sent free. Also a catalogue of mechanical and scientific books sent free.

Patents taken through Munn & Co. receive special notice in the **Scientific American**, and thus are brought widely before the public without cost to the inventor. This splendid paper, issued weekly, elegantly illustrated, has by far the largest circulation of any scientific work in the world. $3 a year. Sample copies sent free.

Building Edition, monthly, $2.50 a year. Single copies, 25 cents. Every number contains beautiful plates, in colors, and photographs of new houses, with plans, enabling builders to show the latest designs and secure contracts. Address
MUNN & CO., NEW YORK, 361 BROADWAY.

ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՔ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆԻ

ԱՐՈՒԵՍՏ ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ

Իւր տեսակին մէջ առաջինն ու միակն է ի հայերէն գրականութեան։ Ի պէտս վարժարանաց յօրինուած է, և կուսուցանէ կարդալու և ճառախօսելու արուեստ, արուեստ գեղեցիկ և դժուարին, որոյ հիմնական կարեւորութիւնն դեռ բաւական զգալի եղած չէ առ մեզ։ Բազմ և մէկ դասերու մէջ ամփոփուած են կանոնք և բացատրուած են օրինակօք հետեւեալ հանգամանք ճառախօսութեան.— ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ, ՁԱՅՆ, ՇՆՉԱՌՈՒԹԻՒՆ, ՊՆԴՈՒՄՆ, ՈՂՈՐՄՈՒՆՔ, ՍԱՀՈՒՄՆ, ՁԱՅՆԻ ԱՍՏԻՃԱՆՔ, ՁԱՅՆԻ ԶՕՐՈՒԹԻՒՆՆ, ՁԱՅՆԻ ՈՐԱԿՆԵՐՆ, ԱՐԱԳՈՒԹԻՒՆ, ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ և ՇԱՐՔ, և ատենախօսութեան պէսպէս ՁԱՐԺՄՈՒՆՔ ներկայացուած են 16 պատկերօք։

Գինն է 2ուկէս ֆրանք կամ 1 րուպլի (50 սէնթ։) Ութածալ 120 երես։ 1891

ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Այս երկ կը ջանայ պարզել թէ Հայկական խնդիրն այլ ևս կենաց և ընչից ապահովութեան խնդիր չէ, այլ Հայ ազգին իւր պատմական հայրենեաց մէջ վերածնութեան կամ կորստեան խնդիրն է, հետևապէս հարցն այն չէ թէ կարօ՞տ եմք համակրանաց և պաշտպանութեան, այլ թէ կարո՞ղ եմք ինքնապաշտպան լինիլ և վերականգնիլ իբրեւ ազգ։ Ձերկրաւոր թագաւորութիւնն, ինչպէս զերկնաւորն, բռունք յափշտակեն։ Արտաքին ճշմարիտ աջակցութեան ընդունակ կը լինիմք միայն երբ զինեալ աջ մեր բարձրացունեմք։ Ոչ թէ բան մ'աճելու այլ բան մի լինելու խնդիրն է երկու խնդրոց մեծագոյնն։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 55 երես։ 1893

«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ» 1892, և «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄՆ ՀԱՅՈՑ» 1879, Սպառած։

ՀԱՅ ԵՈՂՈՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՑԵԱԼՆ ՈՒ ԱՊԱԳԱՅՆ

Հայ բողոքական եկեղեցւոյ մի անջատ կազմաւորման առաջնորդող սխալ քայլերըն պատմարանելէ յետոյ՝ հեղինակն կը ցուցնէ թէ այդ եկեղեցական կազմակերպութիւն բոլորովին զուրկ լինելով հայ ազգային հանգամանքէ՝ չի յաջողիր մեր մէջ, և կ'առաջարկէ որ հայ բողոքականք թողուն այդ օտար դրութիւնն և բուն ազգային կամ մայրենի եկեղեցւոյն բարեկարգեալ այնպիսի մէկ դրութիւնն որդեգրեն որ կարենայ իբրեւ մաքրուած և ազգային եկեղեցւոյ տիպար նկատուիլ ազգին լուսամիտ մասէն։

Գինն է 1 ֆրանք (20 սէնթ) 61 երես։ 1888

ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՒԱՌԱՆՔ

Հայ ցեղին Հոգեբանութեան վերայ անդրանիկ երկասիրութիւն մ'է այս ուր պարզուած են Հայոց ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳԻՈՅՆ բարեմասնութիւնք և ազնիւ միտումներն, և ցուցուած է Հայաստանի բնագրական ազդեցութեանց դերն հայկական բնաւորութիւնն կազմելու մէջ։ Այդ իմաստասիրութենէ կը բխին չորս եզրակացութիւններ ազգային իտէականի և դաստիարակութեան վերաբերութեամբ, որք կարճ ի կարճոյ նշանակուած են։

Գինն է 50 սանթիմ (10 սէնթ) 31 երես։ 1894

ՄԱՐԶԱՐԱՆ

ՄԱՐԶԱՐԱՆՆ 117 երեսէ բաղկացած աշխատասիրութիւն մ'է Տ. Գրիգոր Գասպարեանի գրչէն, տպեալ Նիւ Եորք, Մ. Ս. Գ.ի տպարանում, 1892ին։ Առաջին մասին մէջ, որ 77 հատուածներէ կազմեալ է և 36 ձեւերէ կամ պատկերներէ, կ'ուսուցանէ թէ զինուորն ինչպէս պէտք է կայնի, քալէ, քալէ, վազէ, չրջան անէ, ուսին, հրացան բռնէ ու գործածէ, կրակէ անհատաբար, շարքով, ծնրադրութեամբ, գետնամած ևն. ևն.։ Երկրորդ մասում կ'ուանդէ «ՊԻՏԱՆԻ ԳԻՏԵԼԻՔ ՄԱՐՏԱԳԻՏԱԿԱՆՔ։» Այս գիրքն կարդալ և ըստ այնմ իրենք զիրենք մարզել պարտին մեր երիտասարդք։ Գին 50 սէնթ։

ԴԻՒՐՈՒԹԻՒՆ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ

ՄԱՐԴՈՑ ԵՒ ՍՏԱԿԻ

Նաւերու տոմսակ կուտանք դէպ ի Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ երթալ ուզողներուն։ Մասնաւոր գծեր ունիմք ուղղակի Թուրքիա կամ Ռուսիա տանելու։ Մեծ դիւրութիւն մը կը լինի ճամբորդներուն երբ հոս գիտեն թէ ինչ գծով պիտի ուղեւորին, և տոմսակնին կը գնեն մէկէն, որով թէ՛ աժան գնով պիտի առնեն և թէ՛ օտար երկիրներու մէջ տոմսակ գնելու համար միջնորդներու պէտք չունենան և չխաբուին։ Նոյնպէս Եւրոպայէ դէպի հոս եկողներուն ևս մեծ դիւրութիւն է տոմսակը հոս գնել և խրկել, որ ստակը չկորսուի և չխաբուին ինչպէս շատերուն եղած է։ Ամենէն լաւ գիծը գիտցուած է ՖՐԷՆՉ ԼԱՅՆը որուն վրայ բոլոր ճամբորդներէն գոհունակութիւն լսած ենք։ Նաւերը մեծ և գեղեցիկ են և արագ կ՚երթան. լաւ կերակուր և գինի կուտան, և աժան գնով։

Նաև մեր տանց ստակի փոխադրութիւնը տարիներէ հետէ գոհացուցած է բոլոր յաճախորդներն։ Փորձառուներէն հասկցիր ստակդ ձեռքէդ հանելէդ առաջ որպէս զի չխաբուիս, երբ ըսեն թէ ուրիշներէն աժան կուտանք։ Ապահովութիւնը բոլոր շահերուն մեծագոյնն է և չաստ տարիներու փորձառութիւնը մեծ ապահովութիւն մ՚է։ Աստի ստակ և տոմսակ Թուրքիոյ կամ Եւրոպիոյ ոևէ կողմ խրկել ուզողներ կամ տեղեկութիւն ուզողներ կրնան դիմել հետևեալ հասցէին։

Նամակներու պատասխանները շուտով կը գրուին։

D. M. SHOOSHAN
41 Exchange St., Worcester, Mass.

ՆԻՒ ԵՈՐՔ

ՔԷԹ ՔԸՈՒԶ

անունն է Ուստըրի Ֆրօնթ ֆփողոցին մէջ գտնուող թիւ 14 վաճառատանն, ուր կը վաճառուին գլխարկ, գլխանոց, ձեռնոց, չապիկ, օձիկ, փողկապ. ամենն ալ

ԱՄԵՆԱԱԺԱՆ ԳՆԵՐՈՎ

Հայ գաղթականութեան պէտքերուն համապատասխանող խանութն է ասի, ինչպէս արդէն շատերն փորձով տեսած են։

ՈՒՍՏԸՐԻ ՀԻՆԳ ՍԷՆԹ ԽՆԱՅԵԼՈՒ ՊԱՆՔԱՆ

Այս պանքան հիմնուած է 1854ին. կ՚ընդունի մինչև անգամ հինգ սէնթ։ Ժամերն են կէս օրէն առաջ 9էն մինչև կէս օրէն վերջ 4։ Շաբաթ օրերն 9էն մինչև 1։

Հասցէն է 314 Մէյն փողոց։

ՀԻՆ ԱՇԽԱՐՀՆ ՓՈՂ ՈՒՂԱՐԿԷ ԱՄԵՐԻՔԸՆ ԷՔՍՓՐԷՍ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՆԻ ՕՐՏԸՐՈՎ

(American Exprss Co'.s Money Order)

Կատարելապէս ապահով են։ Այդ ընկերութեան ո և իցէ օֆֆիսէն կրնաս առնուլ հետևեալ պայմաններով վճարելի յԵւրոպա.

Ոչ	աւելի	քան	5	տոլար	5 սէնթ
,,	,,	,,	10	,,	8
,,	,,	,,	20	.,	10
,,	,,	,,	30	,,	12
,,	,,	,,	40	,,	15
,,	,,	,,	50	,,	18
,,	,,	.,	100	,,	30

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Մ. Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ